



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ
 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ**

*«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք
 անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ Արքայութիւնը»
 (Մարկոս 10: 15):*

Արեւմտեան մեր թեմի Կիրակնօրեայ Դպրոցները, հաւատարիմ քրիստոսաւանդ պատգամին, իրենց հոգեւոր ինսամբին յանձնուած մանուկներուն ու պատանիներուն կը ջամբեն քրիստոնեական գիտելիքներ եւ հայեցի առողջ կրթութիւն: Արդարեւ, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Կրօնական Ժողովի անմիջական ինսամբը եւ հոգածութիւնը վայելող Կիրակնօրեայ Դպրոցները, ինչպէս անցնող տարիներուն, բայց մասնաւորաբար 2006-07 ուսումնական տարեշրջանին ունեցան արդիւնալից եւ բարեյաջող տարեշրջան մը: Կազմակերպուեցան դաստիարակչական բնոյթով ուսուցչաց միօրեայ հաւաքներ, լսարաններ եւ միջ-դպրոցական հանդիպումներ, զարգացման մրցումներ եւ տօնախմբութիւններ: Ուսումնական այս տարեշրջանին էր որ կազմուեցան եւ պատրաստուեցան Նոր Կտակարանի աւետարանական 32 դէպքերու եւ հրաշքներու պատկերազարդ եւ գունաւոր նկարները, Կիրակնօրեայ լսարանային բաժնի դասաւանդութեանց տարեկան ծրագիրի պատրաստութիւնը՝ համաձայն Հայց. Առաքելական եկեղեցւոյ Տօնակարգին: Այս բոլոր աշխատանքները յառաջ տարուեցան Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմնի, ինչպէս նաեւ ուսուցչական կազմի ամբողջանուէր ճիգերով եւ անձնորի ջանքերով:

Առ այդ, երախտագիտութեան, ինչպէս նաեւ իրագործուած ծրագիրները տօնախմբելու նպատակաւ, Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինը գեղեցիկ գաղափարը յղացած էր Էնսիւնոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ «Աւետիսեան» սրահին մէջ, ուսումնական տարեշրջանի աւարտին, Շաբաթ, 9 Յունիս 2007ին, կազմակերպել ճաշկերոյթ խրախճանք եւ պարգեւատրել Կիրակնօրեայ Դպրոցներու տեսուչները, ինչպէս նաեւ 5ԷՆ 25, եւ 26 ու աւելի տարիներ Կիրակնօրեայ Դպրոցներէ ներս ծառայած ուսուցիչներն ու ուսուցչուհիները:

Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը: Ներկայ էին Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան վարիչները՝ Գերպ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, ծխական շրջաններու Հոգեւոր Հովիւներ, երեսփոխաններ, հոգաբարձական կազմեր, Հայց. եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան

ներկայացուցիչներ, Կիրակնօրեայ Դպրոցներու տեսուչներ, ուսուցչական կազմեր, ծնողներ եւ Կիրակնօրեայ Դպրոցներու առաքելութեան հաւատացող աւելի քան 450 ներկաներ:

Հանդիսավարը՝ Յոգշ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը որպէսզի օրհնէ սեղաններն ու երեկոյթը: Ապա հաւաքաբար Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգը երգուելէ ետք՝ հանդիսավար Հայր Սուրբը բացման իր խօսքին մէջ ամփոփ կերպով անդրադարձաւ Կիրակնօրեայ Դպրոցներու աշխատանքներուն եւ առաքելութեան, շեշտելով անոնց մատուցած երախտարժան գործը՝ նուիրուած մեր մատղաշ սերունդի հոգեւոր կրթութեան եւ կրօնական դաստիարակութեան: Դաստիարակութիւնը, ըսաւ Հայր Սուրբը, պարզ եւ դիւրին գործ է, մանաւանդ հոգեւոր դաստիարակութիւնը, որուն լծուած են Կիրակնօրեայ դպրոցները: Անոք մեր մանուկներն ու պատանիները աստուածգիտութեան կ'առաջնորդեն, Աւետարանի ճշմարտութիւններ կը ջամբեն, հոգեւոր արժէքներով, եկեղեցագիտութեամբ ու բարոյական սկզբունքներով կը ջանան կոփել անոնց սիրտն ու հոգին, որպէսզի հոգիով հարուստ՝ անոնց մէջ կերտուի առողջ նկարագիր, ու հազնին Ս. Հոգիի սպառազինութիւնը:

Ընթրիքի պահուն, պաստառի վրայ ներկայացուեցան թեմիս Կիրակնօրեայ Դպրոցներու տարած աշխատանքներէն պատկերներ, աշակերտական կիրակնօրեայ գործունեութիւններն ու կրօնադաստիարակչական օգտակար ծրագիրները: Ապա Սարին Քելէշեան, Մարք Մարգարեան եւ Սեւակ Պատոյեան, հանդէս եկան հոգեւոր երգերով:

Գերապատիւ Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան շեշտեց Կիրակնօրեայ Դպրոցներու եզակի ուսումնարան ըլլալու հանգամանքը, ըսելով որ այսօրուան պատանին Քրիստոս-բրուտի ձեռքերուն մէջ քրիստոնեական արժէքներով պիտի հարստանայ, հայու առողջ նկարագիր կերտէ ու կերպարանաւորուած՝ վաղուան կեանքին պիտի պատրաստուի եւ ստանձնէ եկեղեցանուէր, ազգօգուտ պատասխանատուութիւն եւ դերակատարութիւն: Կիրակնօրեան իւրայատուկ է, որովհետեւ հոգեւոր իր հնոցին մէջ նետուողներ աստուածային ճշմարիտ գիտութեամբ կը հարստանան, արդարութեան եւ շնորհքի լոյսով կ'ողորդուին, հաւատքի վահանը եւ յոյսի գօտին կը հազնին եւ Ս. Հոգիի սպառազինութեամբ՝ դէմ կը դնեն մեղքին, աշխարհին ու Սատանայի որոգայթներուն: Ապա Հայր Սուրբը բեմ հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի յանձնէ գնահատագիրները Կիրակնօրեայ Դպրոցներու վաստակաշատ տեսուչներուն եւ երկար տարիներ Կիրակնօրեայ Դպրոցներէ ներս կամաւոր եւ անձնդիր պաշտօնավարած ուսուցիչ-ուսուցչուհիներուն: Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմնի ատենապետ Տիար Յակոբ Ջաղացպանեան, իր մատուցած ծառայութիւններուն եւ երկար տարիներու նուիրեալ աշխատանքներուն համար, Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ արժանացաւ յատուկ գնահատանքի եւ ստացաւ սեղանի արծաթապատ խաչ:

Իր փակման եւ օրհնութեան խօսքին մէջ, Սրբազան Հայրը շնորհաւորեց գնահատագիր ստացող բոլոր տեսուչները, ուսուցիչներն ու ուսուցչուհիները եւ բարձր գնահատեց Կիրակնօրեայ Դպրոցներու տարած կրօնադաստիարակչական օգտակար աշխատանքները: Առաջնորդը

գնահատեց նաեւ Կիրակնօրեայ Դպրոցներու տարեկան անդրանիկ այս ձեռնարկը կազմակերպող Ծնողա-օժանդակ յանձնախումբը, Վարիչ Մարմինը, ինչպէս նաեւ Քրիստոնէական Դաստիարակութեան Վարիչ Հայր Սուրբերը, ներկայ եղող եկեղեցիներու հոգաբարձական եւ երեսփոխանական կազմերը, երիտասարդաց ներկայացուցիչները, մաղթելով, որ յառաջիկային կրօնադաստիարակչական, կազմակերպչական-հոգեւոր աշխատանքները առաւել եւս ծաւալին, ըլլան արդիւնաւոր եւ նորանոր իրագործումներով հարուստ՝ ի սպաս եւ ի հոգեւոր կրթութիւն ու ազնիւ, բարի ծառայութիւն, վասն հայ մատղաշ սերունդներուն:

Երեկոյթի մնացեալ ժամերը ներկաներ վայելեցին ժողովրդային հայ երգերու սիրուած մեկնաբան Ատիս Հարմանտեանի ժողովրդային եւ հայրենասիրական երգերու խանդավառ մթնոլորտը:

Մ.Ծ.Վ.Ա.

FIRST ANNUAL BANQUET OF PRELACY SUNDAY SCHOOLS

*“Assuredly, I say to you, whoever does not receive the kingdom of God as a little child will by no means enter it”
(Mark 10:15)*

Under the direction of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the assistance of our clergy members, great advancements were made in Prelacy Sunday Schools in the 2006-2007 school year thanks in part to the organization of educational seminars, conferences, inter-school competitions and the like. To celebrate these achievements, the Sunday Schools’ Central Directorate organized its first annual banquet, which was held under the auspices of Prelate, on Saturday, June 9, at “Avedissian” Hall in Encino, during which teachers were honored for their service and dedication to our students.

Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian were also in attendance along with parish pastors, delegates, Boards of Trustees, youth association members, Sunday School directors and teachers, and over 450 guests.

The evening began with the Prelate’s invocation followed by the collective singing of the Sunday School anthem. In his welcoming remarks Master of Ceremonies Very Rev. Fr. Barthev Gulumian briefly outlined the mission of our Sunday Schools. During dinner guests enjoyed a video featuring the activities of the schools followed by a set of spiritual songs by Sarine Keleshian, Mark Markarian, and Sevag Badoian.

Very Rev. Fr. Muron Aznikian delivered the keynote speech in which he stressed the invaluable education and spiritual nourishment our youth receive at Sunday Schools, and subsequently invited the Prelate to present the awards

to the teachers as well as to present Central Directorate Chair Mr. Hagop Chaghatsbanian with a special cross in recognition of his extensive service.

The Prelate, in his closing remarks and benediction, congratulated the directors and teachers and highly commended the work they undertake. He also congratulated the organizers of the banquet, and all those who contributed to its success, wishing them many more years of fruitful service.